ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 80

18 11 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 50-րդ, 54-րդ և 55-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 13 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Ա. Պողոսյանին՝ սահմանված կարգով ապահովել հաղթող ճանաչված կազմակերպության հետ երթուղու սպասարկման պայմանագրի կնքման գործընթացը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2011թ. նոյեմբերի 18
թիվ 90 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

2011թ.նոյեմբերի 16-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի անդամ՝ գյուղապետարանի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Վ. Գրիգորյանը, Ս. Ղարիբյանը, Ա. Արամյանը, Ա. Դավթյանը:

Օրակարգ

2011 թվականի նոյեմբերի 8-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին- 2011թ. նոյեմբերի 8-ին անցկացված ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորափոխադրող կազմակերպություններին հատկացնելու մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին- Ա. Պողոսյանը, Ա. Հակոբյանը, Վ. Գրիգորյանը, Ա. Արամյանը, Ա. Դավթյանը, Ս. Ղարիբյանը

Որոշեցին

1. 2011թ. նոյեմբերի 8-ին կայացած մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել ներքոհիշյալ կազմակերպություններին՝

N	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Երթուղու տեսակը	Հաղթող ճանաչված կազմակերպության անվանումը	Ավտոմեքենայի անվանումը	Ավտոմեքենայի պետհամարանիշը
1	2	3	4	5	6	7
1	02-009	Արտաշատ-Գետազատ	ավտոբուսային	<<Արտաշատի ԲՈՒԱՏ>> ՍՊԸ	ԼԱՋ-695-Ն ՊԱՋ-672	285SU25 632SU25
2	02-022	Արարատ-Երասխ	ավտոբուսային	<<Վեդու ԲՈՒԱՏ>> ՍՊԸ	ՊԱՋ-672 ՊԱՋ-672	321UL26 322UL26
3	02-027	Մասիս-Հայանիստ-Խաչփար	միկրոավտոբուսային	<<Էջմիածնի ԲՈՒԱՏ>> ԲԲԸ	ԳԱՋ-322132-4 ԳԱՋ-32213	14UO013 604US29

Հիմք մրցութային ամփոփիչ թերթիկ՝ 1 թերթ

2 Մարզպետի հաստատմանը ներկայացնել անցկացված մրցույթի արդյունքները և առաջարկել հաղթող ճանաչված կազմակերպություններին հանձնվող երթուղիների սպասարկման ժամկետներ սահմանել.

NN	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Կազմակերպության անվանումը	Սպասարկման ժամկետը /տարի/
1	02-009	<< Արտաշատ-Գետազատ>> ավտոբուսային	<<Արտաշատի ԲՈՒԱՏ>> ՍՊԸ	3
2	02-022	<< Արարատ-Երասխ >> ավտոբուսային	<<Վեդու ԲՈՒԱՏ>> ՍՊԸ	3
3	02-027	<< Մասիս-Հայանիստ-Խաչփար>> միկրոավտոբուսային	<<Էջմիածնի ԲՈՒԱՏ>> ԲԲԸ	3

համաձայն ՀՀ կառավարության 2001 թ. օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետի 1) ենթակետի և 55-րդ կետի 1) ենթակետի:

3 Սահմանված ժամկետում հայտ չստանալու պատճառով 02-016 <<Վեդի-Գոռավան-Արարատ>> երթուղու մասով մրցույթը համարել չկայացած:

Նախագահ	Ա Մուրադյան	/ստորագրություն/
Տեղակալ	Ա.Պողոսյան	/ստորագրություն/
Քարտուղար	Ա.Հակոբյան	/ստորագրություն/
Անդամներ	Վ.Գրիգորյան	/ստորագրություն/
	Ս.Ղարիբյան	/ստորագրություն/
	Ա.Արամյան	/ստորագրություն/
	Ա.Դավթյան	/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան